ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

1966 թ. ապրիլի 12—13-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված 1964—1965 թթ. դաշտային աշխատանքների արդյունքներին։ Նստաշրջանում քննարկվեցին նաև տեսական նշանակություն ունեցող զեկուցումներ։ Քննարկված զեկուցումները ընդգրկում էին ինստիտուտի պրոֆիլին համապատասխան երեք կարևոր բնագավառներ՝ հնագիտություն (ներառյալ վիմագրությունը), ազգագրություն և բանահյուսություն։

Ինստիտուտի վաղ հնագիտության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Հ. Մարտիրոսյանի զեկուցումը նվիրված էր «Նոր Արմավիրի հնագիտական արշավախմբի աշխատանքների արդյունքներին»։ Նա նշեց, որ Արմավիրի պեղումների շնորհիվ պարզված է, որ դեռևս 8-րդ դ. մ. թ. ա. այստեղ հիմնվել է ուրարտական մի մեծ քաղաք, որը փոված է եղել Նոր Արմավիրի սուրբ Դավիթ կոչվող բլրաշարքի վրա և նրա ստորոտում։ Ընդարձակ այս քաղաքը, զեկուցողի կարծիքով, եղել է Արգիշտիխինիլին, որն ունեցել է կրկնակի միջնաբերդ և իր մեջ է առել նաև Հին Արմավիրի ավելի բարձրադիր բլուրը։ Պեղումների ժամանակ հայտնաբերվել են բավական հետաքրքրական նյութեր, որոնց հիման վրա զեկուցողը կարևոր եզրակացություններ արեց բնակավայրի նշանակության, բնակիչների զբաղմունքի, մշակույթի և այլ հարցերի մասին։

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանի «Ճաշենի բրոնզեդարյան դամբարանադաշտի ու բնակավայրի պեղումները» զեկուցումը նվիրված էր վերջին տարիների կատարած աշխատանքներին։ Եթե մինչև վերջին ժամանակները Ճաշենի արշավախումբը ավելի մեծ ուշադրություն էր նվիրում դամբարանների պեղումներին, ապա այժմ շեշտը դրվում է ամրոցի պեղումների վրա։

Ճաշենի պեղումները նոր լույս սփռեցին Հայաստանի պատմության նախահայկական շրջանի բազմաթիվ պրոբլեմների լուսաբանման վրա։ Պեղումները շարունակվում են։

Մեծամոր բնակավայրի 1965 թ. պեղումների մասին քննարկվեցին երկու զեկուցում։ Երկրաբանական գիտությունների թեկնածու Կ. Մկրտչյանը և պատմական գիտությունների թեկնածու Է. Խանզադյանը պարզել են, որ այստեղ բլրի վրա և նրա ստորոտում բնակավայր է առաջացել դեռևս 3-րդ հազարամյակի վերջերին, որը պահպանել է իր գոյությունը մինչև միջին դարերը։ Պեղումների շնորհիվ հայտնաբերված արտադրական կառուցվածքները, մանավանդ մետաղահալական հնոցները, ցույց են տալիս, որ Մեծամոր բնակավայրը եղել է մետաղամշակության խոշոր կենտրոն, որտեղ մշակվել են դրսից բերված զանազան հանքանյութեր, դրանց թվում՝ անագի հումքը։

Թեղուտի մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակների երկրագործական բնակավայրի հետախուզական պեղումների մասին զեկուցումով հանդես եկավ Ռ. Ռոբոսյանը։

Երկար տարիներ սիստեմատիկ պեղումներ են կատարվում Գառնիում, իսկ 1962 թվականից նաև Արմավիրում։ Այդ պեղումների շնորհիվ մեծ քանակությամբ նյութեր են հայտնաբերվել, որոնք արդեն յայնորեն հայտնի են գիտական հասարակայնությանը։ Հանդես գալով «Հայաստանի նյութական մշակույթը 6—7 դարերում, ըստ Արմավիրի և Գառնիի պեղումների» զեկուցումով, պրոֆ. Բ. Առաքելյանը առաջ քաշեց հայ ժողովրդի կազմավորման ավարտի և հայ պետականության առաջացման այդ դարաշրջանի մշակույթի ակունքներին, զարգացման մակարդակի բնույթին վերաբերող կարևոր հարցեր և եզրակացություններ։

Գառնիի հնագիտական արշավախմբի մի ջոկատը, պատմական գիտությունների թեկնածու Գ. Տիրացյանի գլխավորությամբ, պեղումներ է կատարում Գառնիից ոչ հեռու գտնվող Հացավան ամրոցում։ «Հաքավան ամրոցի պեղումները» իր զեկուցման մեջ Գ. Տիրացյանը հնագիտական նյութի հիման վրա պարզում է ամրոցի կառուցման ժամանակը (ուշ հելլենիստական կամ

վաղ միջնադարյան), ապա գտնում, որ ամրոցը եղել է Գառնին պաշտպանող ֆորպոստ։ Ամրոցի պեղումների ընթացքում հայտնաբերած նյութերն ունեն իրենց զուգահեռները Հայաստանի միջնադարյան քաղաքների ու բնակավայրերի հնագիտական նյութերի հետ։

Հայաստանի քաղաքներից իր նշանակությամբ և այսպես ասած երկարակեցությամբ հատուկ տեղ է գրավում Դվինը, ուր հնագիտական պեղումներ են կատարվում 1936 թ. (փոքր ընդհատումներով)։ Դվինի հնագիտական արշավախմբի պետն է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, որը և նստաշրջանում կարդաց զեկուցում «Դվինի պեղումները» թեմայով։ Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը Դվինի անցյալ պեղումների մասին համառոտ պատմական ակնարկից հետո, հատկապես կանգ առավ վերջերս հայտնաբերված երկու կարևոր հնագիտական հուշարձանների՝ աշխարհիկ նշանակություն ունեցող բազիլիկ ոճով կառուցված դահլիճի և պաշտամունքային կրակարանի-ատրուշանի վրա, ուշագրավ պատմա-ազգագրական դիտողություններ անելով այս կապակցությամբ։ Միաժամանակ նա նշեց, որ հնագիտական աշխատանքների ծավալը Դվինում հարկավոր է ընդլայնել։

Ճարտարապետ Յու. Թումանյանը նստաշրջանին ներկայացրած «Զովունի 5—7 դդ. ջրի տակ մնացող հուշարձանների տեղափոխումը» թեմայով իր զեկուցման մեջ հանգամանորեն բնութագրեց և արժեքավորեց Զովունի գյուղի շրջակայքում գտնված ճարտարապետական հուշարձանները։ Զեկուցողը հայտնեց, որ այդ հուշարձաններից մեկը պեղվել և հանգամանորեն ուսումնասիրվել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից և տեղափոխվել մոտիկ բարձունքի վրա։ 1966 թ. պետք է իրականացվի երկու ավելի խոշոր հուշարձանների՝ Դնթունիների 5-րդ դարի եկեղեցու և սուրբ Վարդան կոչվող դամբարանային կառուցվածքի ուսումնասիրությունը և փոխադրությունը նույն բարձունքի վրա։

Ինստիտուտի գիտաշխատակից Ս. Հարությունյանը 1963—1965 թթ. պեղել է Ամբերդ ամրոցը։ Ամբերդում հնագիտական պեղումները սկսվել են դեռևս 1936 թ. բազմավաստակ Հ. Օրբելու ղեկավարությամբ, բայց շատ շուտով ընդհատվել են։ Ս. Հարությունյանը իր «Ամբերդի նոր պեղումները» թեմայով զեկուցման մեջ հնագիտական, պատմագրական նյութերի հիման վրա այն եզրակացությանն է գալիս, որ ամրոցը կառուցվել է 10-րդ դ. 2-րդ կեսին, այն ունեցել է ռազմա-պաշտպանողական կարևոր նշանակություն՝ շնորհիվ իր բնական ու արհեստական (կառուցողական) դիրքի և ավերվել է մոնղոլական արշավանքների ժամանակ, 13-րդ դարում։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը նաև լուրջ ուշադրություն է դարձնում հայ վիմագիր արձանագրությունների հավաքման, վերլուծման և հրատարակման գործին, որոնք անգնահատելի աղբյուր են հանդիսանում Հայաստանի պատմական, սոցիալ-տնտեսական կյանքի շատ հանգամանքներ լուսաբանելու տեսակետից։ Վիմագրության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանի «Հայ վիմագիր արձանագրությունների հավաքումն ու մշակումը» զեկուցումը նվիրված էր ինչպես անցյալում կատարած, այնպես էլ ներկայումս տարվող աշխատանքների գնահատմանը։ Հեղինակը նշում է, որ վիմագիր արձանագրությունների հավաքման արդի մեթոդը ունի մի շարք առավելություններ անցյալի համեմատությամբ (լուսանկարում, գծագիր ընդօրինակություն, վերծանում տեղում)։ Վիմագիր արձանագրությունները հավաքելու աշխատանքը ընդգրկում է ոչ միայն հանրապետության սահմանները, Անդրկովկասը, այլև Միության այն վայրերը, ուր նախկինում եղել են հայկական գաղթօջախներ (Հյուսիսային Կովկաս, Ղրիմ, Աստրախան, Կամենեց-Պոդոլսկ)։ Արձանագրությունները մշակվում և հրատարակվում են, արդեն լույս են տեսել «Դիվանի» առաջին և երկրորդ պրակները, իսկ երրորդը հանձնված է տպագրության։

Վիմագրության մասին «Տեկորի արձանագրությունը և հայ գրերի սկզբնական ձևերը ըստ վիմագիր արձանագրությունների» զեկուցում կարդաց նաև Ա. Մանուչարյանը։

Ինստիտուտը ծավալուն աշխատանք է կատարում նաև հայ ազգագրության և բանահյուսության գծով։ Ազգագրության բնագավառի աշխատանքների մասին ներկայացված էին երեք զեկուցում։ Ազգագրության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Դ. Վարդումյանը «Ազգագրական դաշտային աշխատանքների արդյունքները» զեկուցման մեջ ամփոփեց և արժեքավորեց վերջին երկու տարվա ընթացքում Հանրապետությունում, Միության մեջ և արտասահմանում ծավալված հավաքչական-հետախուզական աշխատանքների արդյունքները։

1964—1965 թթ. սեկտորը արշավախմբերի գործունեության և ստացիոնար գրանցումների միջոցով հավաքել է մեծ քանակությամբ ազգագրական նյութեր, որոնք թույլ են տալիս հետաքրքիր եզրակացությունների հանգել հայ ժողովրդի կենցաղում կատարված տեղաշարժերի մասին։ Զեկուցողը նշեց նաև, որ սփյուռքահայ մի շարք գրագետներ հավաքել ու ազգագրության

սեկտորին են հանձնել բացառիկ կարևորություն ունեցող ազգագրական նյութեր Արևմտյան Հայաստանի զանազան գավառներից (Շատախ, Բաղեշ, Վան, Մուսա-լեռ և այլն)։

Ազգագրական հավաքչական աշխատանքները տարվում են հայ ժողովրդի համատարած ազգագրության հետազոտության ծրագրով և նյութերը օգտագործվում են թեմատիկ ուսումնասիրությունների համար։ Զեկուցողը առաջարկում է ինստիտուտի դիրեկցիային լուրջ ուշադրություն դարձնել ազգագրական արշավախմբերը տեխնիկապես զինելու վրա։

Յու. Մկրտումյանի «Անասնապահության ձևերը և բնակչության կենցաղը ըստ 19-րդ դարի վերջի հայ գյուղի նյութերի» և Լ. Պետրոսյանի «Հաղորդակցության աղդանշանային միջոցները հայերի մեջ» զեկուցումները տեսական բնույթ էին կրում և զեկուցման հեղինակները նյութի և այլ աղբյուրների օգտագործման հիման վրա հետաքրքիր եզրակացությունների հանգեցին։

Հայ ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքման գործը վերջերս որոշակի աշխուժացում է ապրում։ 1964—1965 թթ. հավաքչական աշխատանքներին էր նվիրված բանահյուսության սեկտորի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Նազինյանի զեկուցումը։ Զեկուցողը նշեց, որ բանահյուսության սեկտորը բացի իր անդամներից, որոնք պարբերական հավաքչական աշխատանք են կատարում, համախմբել է իր շուրջը գործը սիրող, բազմաթիվ կարող մարդկանց, որոնք հանրապետությունում, Միության հայաբնակ վայրերում, Սփյուռքում, ինչ և հայրենանվեր գործով են զբաղվում՝ գրի առնելով ավանդական բանահյուսության բեկորները և ժամանակակից բանահյուսության նմուշները։ Այս կապակցությամբ Ա. Նազինյանը չափազանց բարձր է գնահատում Կոմիտասի հինգ սաներից մեկի՝ նյույորքաբնակ Միհրան Թումանյանի գործունեությունը, որը 40 տարի է ինչ մեծ հմտությամբ ու սիրով գրի է առնում Սփյուռքի հայերից հայրենի բառն ու բանը, մանավանդ երգն ու երաժշտությունը։ Մ. Թումանյանի երկարամյա աշխատանքի արդյունքը պետք է դառնա Հայաստանի սեփականությունը ու անհապաղ հրատարակվի, եզրակացնում է զեկուցողը։ Ապա հեղինակը երախտագիտությամբ նշեց նաև Պոդոլյացի բնակչուհի, տեղի պատմական թանգարանի աշխատակից Թ. Սիսին, որը հայերին վերաբերվող նյութեր է հավաքել ուկրաինական ֆոլկլորից։ Հավաքչական աշխատանքների արդյունքները ամփոփելուն զուգընթաց զեկուցման մեջ բարձրացվեց վիպական փոքր ծավալի ստեղծագործությունների՝ երգիծական զրույցների կենցաղավարման հարցը։

Ժանրային համահավաք ժողովածուների հրատարակությունը բանագետների առաջնահերթ խնդիրներից մեկն է։ Հայտնի է, թե ինչպիսի ընդունելություն գտան «Առածանին», «Հայ ժողովրդական հանելուկները»։ Բանահյուսության սեկտորի աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Գրիգորյանը պատրաստում է հայ ժողովրդական մանկական երգերի համահավաք ժողովածուն։ Նրա զեկուցումը՝ «Հայ ժողովրդական օրորոցային երգերը» թեմայով վերաբերվում էր մանկական երգերի մի նշանակալի բաժնի՝ օրորոցային երգերի բանագիտական վերլուծությանը։ Երաժշտագետ Ա. Հարությունյանը հանդես եկավ «Հայ ժողովրդական քաղաքային երգարվեստը ըստ Լենինականի նյութերի» զեկուցմամբ, ուր բնութագրելով հայ քաղաքային երգի առաջացման ուղիները, կանգ առավ 1965 թ. արշավախմբի գործունեության ընթացքում Լենինական քաղաքում գրի առնված երգերի վրա։

Նստաշրջանում զեկուցումները լուսաբանվում էին լուսանկարներով, նկարներով, չափագրություններով, հնագիտական նյութերով, ձայնագրված բանահյուսական նմուշներով և այլն։ Զեկուցումների քննարկումները անցան գործարար գիտական մթնոլորտում։

Ա. ՂԱԶԻՅԱՆ